Սիրելի դպրոցական համայնք,

Հիվանդ երեխաների հիվանդանոցը աշխատում է ձեր դպրոցի հետ, որպեսզի տրամադրի COVID-19 թուքի ստուգման պարագաներ սիմպտոմատիկ անձնակազմի, ուսանողների և ընտանիքի անդամների համար, կամ նրանց համար, ում Տորոնտոյի Հանրային Առողջության (TPH) կողմից առաջարկվել է կատարել COVID-19 թեստավորում: Թուքի ստուգումը ոչ ցավոտ և հեշտ միջոցառում է և ստուգման միջոցով հնարավոր կլինի նվազեցնել COVID-19 դեպքերը ձեր դպրոցում և բաց պահել դպրոցները:

Որտե՞ղ վերցնել թուքի ստուգման պարագաները:
• Թուքի թեստային պարագաները կարող եք ձեռք բերել Ձեր դպրոցից՝ դպրոցից այն ձեռք բերելու համար նախատեսված հատուկ տարածքից:

Ե՞րբ է հարկավոր օգտագործել թուքի թեստի պարագաները:
• Օգտագործեք թեստային պարագան, երբ ունեք առնվազն 1 կամ ավելի COVID-19 նշաններ (տենդ կամ ցրտահարություն, հազ կամ խզզոց, շնչահեղձություն, հոտառության կամ համի կորուստ, սրտխառնոց/ փսխում և/ կամ փորլուծություն) կամ
• Դուք տեղեկացվել եք Հանրային առողջապահության բաժնի կողմից, որպեսզի ստուգվեք կոնկրետ ժամկետներում:

Ի՞նչ կա թուքի ստուգման պարագաներում:
1. Թուքի հավաքման տարա (կապույտ հեղուկը չեզոքացնում է վիրուսը)
2. Լաբորատորիայի ձևաթուղթ (պետք է լրացնել Ձեր արդյունքները ստանալու համար)
3. Թուքի հավաքման ցուցումներ (լաբորատորիայի ձևաթղթի հետևի կողմում)
4. Ցուցումներ այն մասին, թե ինչպես կարելի է ստանալ Ձեր արդյունքները
5. Ձեր թուքի տարայի դատարկ պիտակը՝ օրինական լրիվ անունը և ծննդյան ամսաթիվը, ըստ ձեր առողջության քարտի վրա նշված տվյալների և փաքցրեք այն անալիզի նմուշի տարայի վրա)

Ինչպե՞ս հավաքել թուքը և այն գցել համապատասխան վայրը:
• Չուտել, չխմել, չծխել, ծամոն չծամել, ատամները խոզանակով չմաքրել, վեյփ չօգտագործել , տեստից 30 րոպե առաջ:
• Հավաքել և պիտակավորել նմուշը, լրացնել ձևաթուղթը, կնքել այն կենսավտանգավոր նյութերի պարկի մեջ:
• Այն անձը, ով չունի ախտանշաններ և հիվանդ չէ, կարող է երկուշաբթի օրվանից մինչև ուրբաթ օրը ընկած ժամանակահատվածում, դպրոցի աշխատանքային ժամերին, գցել նմուշը դպրոցում հատուկ հատկացված վայրում,

- Այս կայքէջում կարող եք դիտել թուքի մասին մեր կողմից նախապատրաստած ցուցումների տեսանյութը. https://www.youtube.com/watch?app=desktop&v=Ru-vFZdImes&feature=youtu.be

Ե՞րբ եմ ստանալու իմ արդյունքները:
Եթե ձեր թեստը դրական է (+):
• 24-48 ժամվա ընթացքում դուք **կստանաք** զանգ SickKids-ից, իսկ Հանրային առողջության բաժնից՝ մի քանի օրվա ընթացքում, որտեղ կլինեն տեղեկություններ և ցուցումներ ձեր հետագա անելիքների մասին:
Եթե ձեր թեստը բացասական է (-):

• Դուք **չեք ստանա** հեռախոսազանգ և պետք է սպասեք, որ արդյունքները ստանաք առցանց եղանակով:
Եթե թեստը անհնար է որոշել:
• Եթե նմուշի վրա պիտակը բացակայում է, բավարար քանակի թուք չկա, կամ լաբորատոր ձևաթուղթը լրացված չէ, մենք կզանգենք ձեզ, որպեսզի տեղեկացնենք, որ նմուշը անհնար է ստուգել:
Արդյունքները ստանալը:

- Եթե տրամադրել եք 10 նիշանի թիվը և Green Ontario Health Care Card -ի երկտառային տարբերակի ծածկագիրը,
    - Կարող եք ստանալ ձեր արդյունքները COVID-19-ի Կառավարական կայքէջից:

https://covid-19.ontario.ca/

COVID-19 Կառավարական կայքէջը

- Եթե դուք չունեք Ontario Health Care Card-ը, դուք ունեք կարմիր և ճերմակ քարտը, կամ բնակվում եք մարզի տարածքից դուրս, ապա:
    - Դուք պետք է ձևաթղթի վրա նշեք ձեր է-փոստի հասցեն, որը կօգտագործվի ուղարկելու համար ձեզ այն ծածկագիրը, որով կկարողանաք ձեռք բերել ձեր արդյունքները https://covid-19.ontario.ca/ կայքում:
    - Եթե դուք չեք ստանում մեզանից ձեր արդյունքները 4 աշխատանքային օրվա ընթացքում, խնդրում ենք մեզ նամակով դիմել է-փոստի հետևյալ հասցեով: mobile.outreach@sickkids.ca